3304

28
R-40

2010

34

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԱՆԴԱԾ ԿԱՆՈՆԸ

ՎԱՍՆ ՆԵՐՄԱՆ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ

ՔԱՐՈԶ

ԽՕՍԵՑԵԱԼ Ի Գ. Կ. ՔԷՄԱԼԵԱՆԷ

Ի ԶՄԻՒՌՆԻԱ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ١٩ محرم ٣٠٧ و ٢
ایلول ٣٠٥ تاریخلی و ٥٥٤ نومرولی رخصتنامه‌سیله
نشر اولنمشدر

مصارفی آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنه‌رق طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1889

28
Ք-17

2001

28
Ք-40
Printed in Turkey

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԱՆԴԱԾ ԿԱՆՈՆԸ

ՎԱՍՆ ՆԵՐՄԱՆ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ

ՔԱՐՈԶ

ԽՕՍԵՑԵԱԼ Ի Գ. Կ. ՓԷՄԱԼԵԱՆԷ

Ի ԶՄԻՒՌՆԻԱ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ١٩ محرم ٣٠٧ و ٢ ایلول
٣٠٥ تاریخلی و ٥٥٤ نومرولی رخصتنامه‌سیله نشر اولنمشدر

مصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنه‌رق طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1889

11197

203
40

12012

Printed in Turkey

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԱՆԴԱԾ ԿԱՆՈՆԸ

ՎԱՍՆ ՆԵՐՄԱՆ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ

"Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ անիկա, երբոր դուն և ան միայնակ էք. Թէ որ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ։ Հապա թէ որ մտիկ չընէ քեզի, քու հետդ մէկ ուրիշ մը կամ երկուք ալ առ, որ երկու կամ երեք վկաներու բերնէ ամէն բան հաստատուի։ Եւ թէ որ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ. իսկ թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։" Մատթ. ԺԸ. 15—17։

Զարմանալի չէ որ երբեմն եղբարց մէջ անհամաձայնութիւնք կը ծագին. քանի որ մեր երկրաւոր պարագաները, խորհուրդները, տեսակէտերը, շահերը, ևն., տարբեր են իրարմէ, կարծեաց տարբերութիւններ և անհամաձայնութիւններ ալ կրնան պատահիլ. սակայն ցաւալի է տեղի տալանոնց, ընդ երկար նիւթ ընել զանոնք մոռցութեան և որոճալ անոնց վրայ։ Փափաքելի է անտարաբոյս որ անհամաձայնութիւնք բնաւ չպատահին. բայց երբ կը պատահին, անոնց առջևը առնելու ջանալ և միջոց գործածել պարտք է մեզ։ Ինչպէս փափաքելի է որ հրդեհ չպատահի, բայց երբ կը պատահի, անմիջապէս կը ջանանք մարել զայն, և մինչ հրդեհի դէպք չկայ, ամէն տեսակ

հսկում, զգուշութիւն և արթնութիւն ի գործ կը դնենք որ հրդեհ չպատահի, և դարձեալ ամէն պատրաստութիւն կը տեսնենք որ ի պատահման՝ առջևը շուտ առնուի, նմանապէս քրիստոնեայք պարտին միշտ արթնութեամբ հսկել որ բնաւ չպատահի ո և է անհամաձայնութիւն և դժտութիւն քրիստոնեայ եղբարց մէջ, և բան մը կարող չըլլայ վրդովել Քրիստոնէական եկեղեցւոյ խաղաղութիւնն ու միաբանութիւնը. իսկ երբ հակառակ ամէն ջանից և զգուշութեանց պատահի դժբաղդ դէպք մը որ սպառնայ եկեղեցւոյն խաղաղութեան, նոքա պարտին ունենալ ամէն պատրաստութիւն և յօժարութիւն անմիջապէս բառնալ զայն ի միջոյ և խաղաղութիւն և անդորրութիւն հաստատել եկեղեցւոյն մէջ։ Եւ որչափ ուրախալի է տեսնել որ մեր ամենօրհնեալ Վարդապետը իւր եկեղեցւոյն խաղաղութեանն ու անդորրութեանն համար յառաջմանէ տուաւ հրահանգ և կանոն, և այն ոչ հասարակ և անբաւական՝ այլ դերազանց և աղդու կանոն մը. քանզի այս կանոնը չէ Սոկրատի կամ Պղատոնի նման անձի մը հանճարին արդիւնքը, ոչ Սողոնի կամ Լիկուրկոսի նման օրէնսդրի մը աւանդած սկզբունքը, և ոչ մինչև անգամ դարերու փորձառութեան ծնունդ, այլ ի վերջ քան զսոսա, նոյն ինքն

մեծաց Աբարչին աւանդած կանոնն է այն, Նորա՝ որ գիտէ մեր մեծաց կազմուածքը, տրամադրութիւններն և օրէնքները կատարեալապէս. ուրեմն բնական է մեզ խորհիլ թէ նա այս տեսակ պարագայից տակ անպատեհութեանց և դժուարութեանց առաջքն առնելու համար լաւագոյն, դիպողագոյն և յաջողագոյն կանոնը աւանդած պիտի ըլլայ։ Ուստի կ'արժէ որ Քրիստոնեայք կոչեն և ընեն զայն "Եկեղեցւոյն Ոսկեղէն Կանոնը," լաւ ուշադրութիւն տան անոր ոգւոյն, նիւթ ընեն զայն իրենց ուսման, անխափար գործադրեն զայն իբր ազդուագոյն միջոց մը ընդ միմեանս ամէն դժտութեանց և անհամաձայնութեանց բարձմանը համար, և խնամով հետևին անոր տրամադրութեանը։ Յաւալի է դիտել սակայն թէ դրեթէ չկայ բան մը զոր Քրիստոնեայք այնչափ մոռցած ըլլան, որչափ Տէրունական այս կանոնը, և չկայ չարիք մը որոյ մասին այնքան անտարբեր մնացած ըլլան նոքա որչափ այս պատուական կանոնին զանց առնուելէն յառաջ եկած չարիքը. սակայն այս կանոնին զանցառութիւնը պատճառ է ոչ սակաւ չարեաց և վնասուց։ Ինչպէս երբ բազմաման գործիքի մը մասանց մին աննշան համարուելով վերցուի, գործիքին ներդաշնակութիւնը կը խանգարի և թերևս անոր չգործելուն պատ-

ճառ կը լինի, նոյնպէս անտարակոյս այս կանոնին զանցառութիւնը իւր չարիքներն ունի, և յառաջ կը բերէ քրիստոնէական եկեղեցւոյն մէջ ցրտութիւն, կասկած, անվստահութիւն, վրդովումներ, խռովութիւններ, անմիաբանութիւններ, դժուարութիւններ, խորարմատ վէրքեր, ևն., ևն.։

Քննենք ուրեմն այս կանոնին իւրաքանչիւր մասերը։ Եւ,

Նախ՝ Ո՛Վ Է ՄԵՂԱՆՉՈՂԸ։ Կանոնը կ'ըսէ, “Եղբայրդ։” Մեղանչողը եղբայր մ'է։ Մենք պատրաստ ենք ընդհանրապէս մերժել զոք մեր եղբայրութենէն այն պահուն որ նա կը մեղանչէ մեզ դէմ. բայց նա եղբայր մ'է, և մենք իբրև եղբայր պարտինք վարուիլ անոր հետ, մինչև որ բաւական պատճառ ունենանք տեսնելու թէ նա եղբայր մը չէ։ Շատերուն մեծ առարկութիւնն է թէ, “Եղբայր մը, մտերիմ մը, լուսաւորեալ անձ մը, ուղիղ գաղափարներու տէր և դաստիարակեալ մէկը զիս վշտացուց. ինտո՞ր համբերեմ։ Եթէ նա չգիտցող մը, չհասկցող մը, թշնամի մը, ևն., ըլլար, ինչ և իցէ տանէի, համբերէի. բայց սա իմ եղբայրս էր որ ըրաւ ինձ այսպէս ու այնպէս, կրնա՞մ տանիլ, կրնա՞մ դիմանալ, կրնա՞մ ներել։” Ու այսպէս պատրաստ չեն լինիր եղբօր մը երեսէն վնաս և զրկանք կրել. և

երբ պատահի որ կրեն, դժուար կը թուի նոցա համբերել և ներել. բայց կանոնը նոյն իսկ ասոր դէմ կը զգուշացնէ զմեզ ըսելով, “Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ։”

Երկրորդ՝ ՎՆԱՍՈՒՈՂԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ Կանոնը կ'ըսէ. “Գնա՛ յանդիմանէ։” Այո, պէտք է երթաս և յանդիմանես զնա։ Մի խօսիր ասդին անդին անոր վրայով, մի դատեր զնա անմիջապէս, մի ցուցներ վէրքերդ ասոր անոր, մի սնունդ տար քու չար խորհուրդներուդ, ատող կրիցդ և կասկածներուդ, այլ “Գնա և յանդիմանէ։” Գնա՛ և շո՛ւտ գնա. մի տրնտընար, մի վարանիր, այլ գնա՛. մի գուցէ ուշանալովդ նա մոռնայ պարագաները. գուցէ դուն սխալ գաղափարներ ձևացուցած ես այն անձին վրայ, թող չհաստատուին անոնք մտքիդ մէջ. պարտիս ներել անոր, ուստի ժամանակ անցունելով աւելի մի դժուարացուներ խնդիրը, այլ շուտ “գնա և յանդիմանէ զնա։” Գնա՛ և խօսէ՛ իրեն. լմնցած մի համարիր խնդիրը. և դուն առանձին մի ներեր մտքիդ մէջ. չես լսած իւր “կ'ապաշխարեմ” ըսելը, չես գիտեր իւր գաղափարն ու համոզումը, ուստի իրաւունք չունիս ուրիշ ո և է քայլ առնելու, այլ պարտքդ է “երթալ և յանդիմանել զնա։” Գնա՛ և յանդիմանէ զնա ոչ սաստկութեամբ և խստութեամբ, այլ մեղմով և սիրով. մի կտրեր յա-

բաբերութիւնդ. այդ վճռել է ժամանակէ առաջ թէ նա է յանցաւոր, անապաշխար և խստասիրտ. ուստի դնա՛ և միջոցներ փնտռէ անոր հետ սիրով վարուելու և բարեկամ ըլլալու. դնա՛ և աշխատէ քու եղբայրդ շահելու։

Երրորդ՝ Ցանդիմանելու կերպը։ Այս կանոնը կը տրամադրէ,

Ա. Երթալ և յանդիմանել ընա դիպնակ։ «Երբոր դուն և ան մինակ էք,» կ'ըսէ կանոնը։ Մենք որչափ հակամիտութիւն կը զգանք զանց առնել կանոնին այս պարզ և առաջին քայլը. բայց ո՞հ, ի՞նչ անուշ առանձնութիւն մը և պատեհութիւն մը պիտի ըլլայ հեզութեան, քաղցրութեան, սիրոյ և քրիստոնէական հոգւով վարուելու ընդ նմա «երբոր դուն և ան մինակ էք։» Ի՞նչ պատուական, աղդու և յուսալի քայլ մը պիտի ըլլայ ընա շահելու «երբոր դուն և ան մինակ էք։» Ձեր առանձնութեան մէջ մեղուցեալ եղբօրդ վրայ նայիլդ, լացող աչքերդ սրբելով ընա «Եղբայր» կոչելդ, կայծակի պէս պիտի աղդէ եղբօրդ սրտին և պատրաստէ ընա դիջանելու և իւր պարտքը ճանչնալու և կատարելու. ուստի դնա յանդիմանէ ընա «երբոր դուն և ան մինակ էք։» Եւ այսպէս ընելով,

1. Ա՛ն չէ որ անոր ամնալ ուրիշներէն, այլ աղատ կ'ըլլայ խօսիլ ընդ քեզ խնդրոյն վրայ,

սխալը խոստովանիլ և ներում խնդրել քենէ։

2. Պարենհուրիւն կու տաս նմա թէ ընդ դիպնակներդ, ընդհանրդիներդ ու պարծանքներդ բացարձակ, ինքդինքը արդարացուցանելու, կամ իւր յանցանքը խոստովանելու, առանց զայն խստացուցանելու պատճառ մը տուած ըլլալու քու կողմանէդ։

3. Կը ցուցնես անոր թէ ջանցդ անկեղծութիւնը թէ ուղղութեան համար, թէ չես ուզեր իւր դաղտնիքը ուրիշին յայտնել և անպատուել զինքը։

4. Կը ցուցնես անոր թէ բարեկամութիւնդ և ազնիւ փափաքներդ, և աւելի վստահութիւն կ'ազդես նմա թէ սիրով կ'երթաս, չես ատեր զինքը, թշնամի չես համարիր զնա, նորա բարի համբաւին, պատուոյն, եւն., անհոդ և աննկատ չես, այլ բարեկամի մը պէս կը հոդաս զնա, համակրութիւն ունիս առ նա, և փափաք ունիս լաւ և երջանիկ վախճանի մը յանդեցուցնելու ձեր բոլոր դժուարութիւնները։

5. Կը յայտնես անոր թէ ցաւագին դիպնակներդ և վիշտերդ, և առիթ կուտաս անոր հասկնալու և ճանչնալու իւր յանցանքը. առանց որոյ դուցէ ընաւ չխորհի և չդիտնայ թէ քեզի դէմ մեղանչեր է, կամ կարծէ թէ դուն չես վշտացած։

Բ. Երթալ դէպ կամ երկու ընկերներով։ «Հապա թէ որ մտիկ չընէ քեզի, քու հետդ մէկ ուրիշ մը կամ երկուք ալ առ,» կ'ըսէ կանոնը։ «Եւ արդեօք հարկ մը կը մնայ երկրորդ քայլ

մ'առնելու․ քանի որ այնչափ խոնարհութեամբ, փափկութեամբ, սիրով և աղօթքով քայլ մ'առի, քանի որ իմ աղաչանքս, պաղատանքս, համոզանքս, աղօթքս, և իւր բարւոյն համար ունեցած այնքան անձկութիւնս և ջանքս արհամարհեց, կը մնա՞յ հարկ ուրիշ քայլ մը ևս առնելու։ Ո՛հ, ես անպատուեալ, զրկեալ և վշտացեալ ըլլալով, տակաւին գացի իրեն․ գացի արցունքով, սիրով, աղօթքով և անկեղծութեամբ։ Վերջին պատեհութեամբ, անկէ զատուելու պահուս, անգամ մը ևս իրեն դառնալով ըսի, ‘Ե՛ղբայր, ի սէր Քրիստոսի, կ'աղաչեմ, հաշտուինք․’ բայց ասոնք, ո՛հ, ասոնք ամէնը չշահեցան և չկակղացուցին իւր սիրտը․ և արդեօք կա՞յ ուրիշ քայլ մը, որով կարելի լինի նորա սիրտը շահիլ,” կը խորհիս․ և թերևս ասոնք իրաւացի պատճառներ ըլլան որ տարակոյս աղդեն քեզ նոր քայլի մը յաջող ելլելու մասին․ սակայն, ե՛ղբայր, ասոնց ամէնը թէև ընդհանրապէս տասը դէպքէ ինննին մէջ կը յաջողին բառնալ դժուարութիւնը, այլ ոչ ամէն անգամ և ոչ առանց բացառութեան․ ուստի և նոքա չեն կրնար վերջնական համարուիլ․ ուրիշ քայլ մը կրնայ բառնալ երբեմն այն՝ զոր առաջին ջանքեր չկրցան բառնալ․ և եթէ առաջին քայլով աղէկ ջանք, նպատակ ու փափաքներ ցուցուցիր անոր, շա-

րունակէ զանոնք և տուր նմա նոր հաւաստիք երկրորդ քայլով մը․ քանզի այսպէս ընելով,

1․ Կը հաստատես իր ուղղուելուն և դարձին համար ունեցած փափաքներուդ և ջանիցդ ճշմարիտ լինելը․ Թէ ոչ, քէն չես պահեր և իւր անպատուելուն երբէք փափաք չունիս։

2․ Քու տուած ընկերներդ կ'օգնեն քեզ քու բարենպատակիդ մէջ և կրնաս վստահ ըլլալ թէ քու առնելու քայլերդ ուղիղ են։

3․ Դիտողութիւն կրնաս քու միջոցաւ եղբօրդ այն պատկառելի ընկերներուդ դիտողութիւնը ընելու․ եթէ քեզի չհամոզուեցաւ, թերևս անոնց պիտի համոզուի․ եթէ դու չյաջողեցար շահիլ զնա, թերևս նոքա պիտի յաջողին․ եթէ քենէ կրնար կասկածիլ, յուսալի է թէ անոնցմէ պիտի չկասկածի։

4․ Կարելի է որ յաջողին անոնք բարեխոհ ընել զինք, իրենց հանդարտ և անկեղծական ոգւով, և իրենց աղդեցութեամբ, խրատով, աղաչանքով և աղօթքով դիւրացընեն խնդրոյն լուծումը։

Ուստի ա՛ռ քու հետդ մէկ կամ երկուք ալ բարւոք ընտրութեամբ և աղօթիւք․ նայէ որ այդ անձինք աւելի մեղուցեալ եղբօրդ հաճելի ըլլան քան թէ քեզ․ թող յաւէտ նա՛ առարկութիւն չունենայ նոցա դէմ քան թէ դուն․ և այսպէս քու լաւագոյն ջանքերդ իգործ դրած պիտի ըլլաս քու եղբայրդ շահելու։

Գ. Եկեղեցի՝ն ըսել։ «Եւ թէ որ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ։» «Բայց արդեօք տակաւին ուրիշ քայլի մը ևս պէտք պիտի մնա՞ր. առանձին այնչափ ջանք և աղաչանք, ընկերներով այնքան համոզանք և աշխատութիւն չշարժեցին զինքը. անոնք բաւական նշաններ և վկայութիւններ չե՞ն թէ նա է անիրաւ, խստասիրտ և անզգայ. այնչափ ապարդիւն աշխատութիւններէ յետոյ, ի՞նչպէս կրնամ յուսալ թէ ուրիշ նոր քայլ մը բարի արդիւնք յառաջ պիտի բերէ. միթէ այնչափ փափուկ ընթացք, այնչափ աղաչանք, պիտի չհպարտացունե՞ն զինքը, կարծել պիտի չտա՞ն իրեն թէ մեք անձնական շահ մ՚ունինք իւր դարձին և ապաշխարութեանը մէջ, ևն. ևն.» կը խորհիս թերևս։ Բայց ոչ, եղբայր, ոչ. նա տակաւին եղբայրդ է և պարտիս շահիլ զնա. մի թողուր քու եղբայրդ. շատ բան ըրիր կը կարծես, տակաւին ըրէ։ Կը դադարի՞ս աշխատելէ հիւանդ զաւկիդ ապաքինութեանը համար, վասն զի առաջին աշխատութիւններդ և ջանքերդ, դարմանք և պահպանութիւնք ապարդիւն եղան։ Կ՚ուրե՞ս այդիդ առանց նախապէս անոր պտղաբերութեանը համար ամէն կարելի եղած դարմաններն ընելու։ Կը կարե՞ս քու մէկ անդամդ այնքան աճապարանօք, վասն զի ցաւ կու տայ քեզ։ Ինչո՞ւ ուրեմն աճապարես քու եղբայրդ կորելու քենէ. այո՛, հարկ է նոր քայլ մը ևս առնուլ։ Ո՞վ կը մեղադրէ ձկնորս մը, որ առաջին և երկրորդ անգամ ուռկանը նետելով պարապ ելլելէն յետոյ երրորդ անգամ ևս կը նետէ զայն. ո՞վ կրնայ մեղադրել այն այգեպանը որ երեք տարի թզենւոյն հոգ տանելէն վերջը տակաւին չէր ուզեր զայն կտրել և կ՚ըսէր իւր տիրոջը, «Տէր, այս տարի ալ թողտուր ատիկա, մինչև որ ատոր բոլորտիքը բրեմ ու թրիք դնեմ։» Գովելի պիտի ըլլա՞ս ուրեմն վաղաժամ դադրեցուցնելով քու ջանքերդ եղբայր մը շահելու. —ո՛չ։ Ուստի յառաջ տար քու ջանքերդ, եղբայր, և եկեղեցի՝ն ևս ըսէ։ Եւ այսպէս,

1. Ա-ելցուք ի՞ւ փափաքանացք հաւատոյ ընդ դարձին եւ բարւոյն համար. տուր նմա պատեհութիւն որ իւր համոզումները փոխելու կամ ուղղելու նոր լոյս և միջոց գտնէ։ Դժուար եղաւ քեզ վասն զի նա յամառեցաւ, շատ յոգնեցուց զքեզ և նորանոր վիշտեր տուաւ քեզ քու ջանքերդ և փափաքներդ անարդելով, բայց եկեղեցւոյն ալ ըսէ և քու բաժինդ լման կատարէ. թերևս շատ յոյս չունիս, բայց ըսէ՛ եկեղեցւոյն. տակաւին եկած չէ կարգը զայն բամբասելու, անոր թշնամիներուն ըսելու, սրճարանները պատմելու, այլ կարգը եկած է եկեղեցի՝ն ըսելու։

2. Թող եկեղեցին ալ քննէ խնդիրը։ Թէպէտև քանի մը հոգւոյ քննութիւնը բաւական չեղաւ, բայց եկեղեցւոյ միացեալ զօրութիւնը կրնայ շատ տարբեր ազդեցութիւն և վախճան ունենալ. Թող եկեղեցւոյն պաշտօնեաները, սարկաւագները և պատկառելի ու փորձառու անդամները ջանան համոզել այն եղբայրը, ցուցնեն նորա սխալմունքը, և աշխատին ուղղութեան բերել զնա. Թող աղաչեն անոր, խրատեն զնա և աղօթեն անոր համար. Թող վկայեն նոքա թէ ուղիղ է քու և ընկերացդ տեսութիւնը և դատումը. Թող ընեն նոքա թելադրութիւններ, պատմեն իրենց փորձառութիւնները և ի գործ դնեն իրենց պատկառանք տուող ազդեցութիւնը. յանցաւոր եղբայրդ թող հասկընայ թէ ոչ միայն քանի մը հոգւոյ՝ այլ ամբողջ եկեղեցւոյ դատումն այս է. և այն՝ իւր ինքզինքը արդարացնելու համար ըրած ամէն ջանքերէ ետքն իսկ. և ասոնք թէ՛ անոր համար և թէ՛ քեզի համար բաւական և լաւ պատճառներ են որ եկեղեցւոյ քննութեան թողուս խնդիրը։

3. Վերջին քայլի մը խորհուրդը նոյն քարոզը պատճառ է երրորդ քայլ մը առնելու. տակաւին եղբայր մ'է նա, և որտին մէջ շահուելու զգացում մը կրնայ ունենալ. սիրտ մը կը կրէ վերջապէս, որ կրնայ գոնէ բանէ մը ազդուիլ կամ շահուիլ.

դուցէ խօսք մը, ջանք մը, լոյս մը, խորհուրդ մը, տկար եղբօր մը կողմանէ եղած թելադրութիւն մը պիտի շահի զնա. կարելի է նայուածք մը կամ միաձայն տեսութեան վսեմ արտայայտութիւն մը, որոշում մը շահի զնա վերջապէս. Սակայն եթէ վերջին քայլ, վերջին դարման, եկեղեցւոյն ալ ըսէ։ Յիշէ Պետրոսը՝ որ երրեակ ուրացութենէ վերջը Յիսուսի մէկ նայուածքովը դարձի եկաւ։ Աւստրալիոյ մէջ անգամ մը գետին մը փորուեցաւ ոսկւոյ համար, և շատ աշխատութենէ վերջը երբ նշան մը չտեսնուեցաւ, գործաւորք այլ ևս դադրեցուցին իրենց խուզարկութիւնները. սակայն երբ անոնցմէ մին կը ժողվէր գործիքները ի սպառ անկէ մեկնելու համար, առաւ իւր մուրճը և «Մնաք բարով»ի ուժգին հարուած մը տուաւ ժայռին, ուսկից փրթաւ կտոր մը և փախչելով ցատկեց և ինկաւ նորա ոտից տակ. գործաւորը հետաքրքրուելով անոր փայլէն, քննեց զայն և գտաւ թէ ոսկի էր այն. հանքը գտնուած էր, և այն՝ ճոխ հանք մը։ Մի լքանիր ուրեմն, վշտացեալ եղբայր, քու մեղուցեալ եղբօրդ վերջին պատուական միջոց մի ևս գործածելէ, և եկեղեցւոյն ալ ըսէ։

Չորրորդ՝ կանոնին գործածութեան արդիւնքը։ Քրիստոսի աւանդած այս կանոնին գործածութենէն յառաջ կու գան իրարու ներհակ սա երկու

արդեանց մին. կա՛մ Շահէլ տո՛ Եղբայրդ, իբրև վարձ ի գործ դրած ջանիցդ և աշխատութեանց, և կա՛մ՝ Համբրել ընտ հեղեանոսի տա՛ սա՛ռուի պէս, եթէ զիջում չըներ նա, Արդ, այս երկու տարբեր արդեանց վրայ համառօտիւ ուրոյն ուրոյն խորհրդածելով վախճան տանք մեր խօսքին։

Ա. Շահէլ տո՛ Եղբայրդ։ "Թէ որ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ," կ'ըսէ կանոնը։ Պարտինք գիտնալ թէ շահուողը եղբայր մ'է. ոչ օտար և անծանօթ մը, ոչ կասկածելի և անվստահելի մէկը, ոչ այնպիսի ոք որոյ հետ չկարենաս որ և իցէ յարաբերութիւն, գործ և զբաղանք ունենալ, այլ պարզապէս եղբայր մ'է նա, ծանօթ և սիրելի. և այն՝ կանոնին քաներորդ քայլէն ետքը որ շահուի։ Երբեմն պատրաստ կ'ըլլանք ընդունելու զոք եղբայր, եթէ առաջին քայլէն յետոյ կը շահուի. բայց այնչափ չենք համակրիր անոնց որ երկրորդ քայլէն յետոյ կը շահուին. աւելի քիչ կը համակրինք անոնց և դժկամակ կ'ըլլանք ընդունելու զանոնք՝ որ երրորդ քայլէն յետոյ հաղիւ կը շահուին. սակայն մենք փոխանակ կասկածանօք նայելու այնպիսւոյն դարձին վրայ, և չհամակրելու անոր, թերևս նորա ուշ շահուելուն համար աւելի պատճառ պարտինք ունենալ ապաւինելու և վստահելու նմա իբրև

հաստատ և անդրդուելի եղբօր մը։ Զօրապետ մը որչափ աւելի ընդդիմութիւն կրէ քաղքի մը դրաւման ժամանակ, այնչափ աւելի կ'ուրախանայ իւր յաղթանակին վրայ. և մենք միշտ աւելի հաճութեամբ կը նայինք այն օրհնութեանց վրայ որ դժուարաւ և շատ աշխատութեամբ ձեռք կը բերենք. մարգարիտ, ադամանդ, ոսկի և գոհարք պատուական են յաչս մեր, քանզի սուղ կը դնենք, և ծանր աշխատութեամբ կը ստանանք զանոնք։ Եւ ինչո՞ւ ուշ և դժուարաւ շահուող եղբայր մ'ալ այնպէս չսեպուի. ինչո՞ւ նա ևս չյարգուի. ինչո՞ւ անոր շահուելուն յաղթանակը եկեղեցին ցնծութեամբ չլեցունէ. անոր ուշ շահուիլը փոխանակ վախու և կասկածի, ցրտութեան և անվստահութեան պատճառ մը համարելու, թերևս անոր ուղիղ, սկզբան տէր և անդրդուելի անձ մ'ըլլալուն փաստ մը սեպել արժան է, և կրնաս աւելի օգտիլ նորա անյողդողդ բնաւորութենէն և վստահիլ նմա յայնժամ՝ քան որչափ եթէ շուտ շահուէր նա. եթէ դժուարաւ և ուշ շահուեցաւ, անոր դառնալն ևս պիտի ըլլայ դժուարաւ և ուշ. ուստի թէև վերջին քայլին ալ շահուի, տակաւին եղբայր մ'է նա, զոր պարտիս սիրել և պատուել, որուն պարտիս օգնել, կարեկցիլ և վստահիլ, և որուն հետ պարտիս վարուիլ և

ԱԳՈ. ՀԱՅԿԱՆ ՊՐԵԳԻՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԿ-ՏՐ

գործել. եթէ կրնաս այսպէս ընել, լաւ. շահած ես զնա. և շահած ես եղբայր մը. իսկ եթէ չես կրնար նկատել և ընդունիլ զնա իբրև եղբայր, եթէ չես կրնար վստահիլ նմա իբրև եղբօր, ապա ուրեմն դեռ չես շահած զնա. քանզի շահուածը եղբայր մ'է։ Ոմանք պատրաստ են ներել, հաշտուիլ և ընել այլ ամէն ինչ որ հարկ է. սակայն նոր վստահութիւն և առնչութիւն չեն ուզեր հաստատել. այսպիսեաց չափազանց կը թուին վերը յառաջ բերուած գիտողութիւնները. սակայն ոչ, անոնք չափազանցեալ չեն. եթէ շահեցար, «եղբայրդ շահեցար.» և պարտիս ընդունիլ և սիրել զնա իբրև եղբայրդ, պարտիս վստահիլ անոր և վարուիլ անոր հետ իբրև եղբօր հետ. եթէ ոչ, դեռ շահած չես զնա. գուցէ տեսութեանդ կամ գաղափարիդ կամ կերպիդ մէջ սխալմունք մ'ունիս, որով չես կրնար զնա եղբայր նկատել. թերևս շահեցար քու եղբայրդ, նա ուղղուեցաւ, դարձի եկաւ, սակայն քու սխալ դատումներովդ անկէ հեռանալու վրայ ես. բայց ո՛հ, եղբայր, եթէ նա շահուեցաւ՝ դու ալ մօտեցիր անոր, փարատէ կասկածներդ, սէր ցուցուր եղբօրդ, եռանդեամբ ողջունէ զինքը և ընդունէ զնա քու եղբայրութեանդ մէջ. և մի հետևիր կանոնին ձևապէս միայն, այլ գործադրէ զայն ըստ ոգւոյն, և այսպէս

շահէ զնա քեզի եղբայր մը ըլլալու։

Բ. Համարէ՛ զնա հեթանոսի ու մաքսաւորի պէս։

«Իսկ թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։» Այս է խնդրոյն տխուր և ցաւալի կողմը. հոս, աւա՜ղ, կը վախճանին անհատական և ընկերական կամ եկեղեցական ջանք, և մեղմ, քաղցրիկ ու փափուկ ազդեցութիւններ, համբերութիւն և երկայնմտութիւն. և խնդիրը — տխո՜ւր վճիռը — կը ծանրանայ յանցաւոր կողման վրայ։ Եթէ քեզի մտիկ չընէ, քու ընկերներուդ չանսայ, եկեղեցւոյն ալ չհնազանդի, յայնժամ «հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։»

Թերևս հոս առարկուի թէ պէ՞տք է այնպիսի ոք համարիլ իբրև հեթանոս և մաքսաւոր. խիստ վճիռ մը չէ՞ այս՝ այն փափուկ քայլերը առնուելէն վերջը։ Առ այս կը պատասխանենք,

1. Թէ այս վճիռը խիստ վճիռ մը չէ. վասն զի, այս որոշումը չենթադրեր,

(ա) Մեղուցեալանձը թշնամի նկատել. չպարտինք զայն անզգամ և անզգայ չարաճճիկ մը համարիլ, իբրև դև մը կամ չար ոգի մը սեպել, այլ պարզապէս հեթանոս մը և մաքսաւոր մը. որոյ դարձը և ապաշխարութիւնը դեռ ևս կարելի է և ակնունելի. ինչպէս, Մատթէոս,

2/103 40

Զաքէոս ու նաև աղօթող մաքսաւորը և Կոռ-
նելիոս ու այնքան հեթանոսք, որք դարձի ե-
կան ճշմարտութեան քարոզութեամբը։ Այս
որոշումը չենթադրեր,

(բ) Վրէժ խնդրել պէտք չէ որ ոխ պահենք,
պատժենք կամ դատաւորին մատնենք զնա.
վճիռը չէ չար հատուցանելայլ միայն հեթանոս
և մաքսաւոր համարիլ, հանել զնա եղբայրու-
թենէ, քրիստոնէական սուրբ ընկերութենէ.
ասկէ աւելին պիտի ըլլայ երկրորդ վճիռ մը
տալ և ոչ այլ ինչ։ Այս որոշումը չենթադրեր,

(գ) Ուրախանալ անոր իյնալուն վրայ։ Ոչ.
պէտք չէ խնդալ անոր անապաշխար մնալուն
վրայ, անոր անպատուելուն վրայ, և.ն., բայց
միայն պէտք է սեպել զնա հեթանոս և մաք-
սաւոր։ Ճշմարիտ և պարկեշտ Հրեայ մը չէր
կրնար չցաւիլ հեթանոսաց և մաքսաւորաց
վրայ. թէ և կը զգուշանար անոնցմէ, պարտ էր
նմա զզուիլ և դարձիլ անոնց գործերէն, բայց
չէր կրնար չխղճալ անոնց արդահատելի վի-
ճակին վրայ։ Մարդկային սարսնագոյն և վայ-
ելենացեալ վիճակին յատուկ է չարին վրայ
ուրախանալ. ուստի մենք Քրիստոնեայքս պար-
տինք ցաւով և արտասուօք հանել այնպիսին
մեր եղբայրութենէն։ Ո՞վ իւր ննջեցեալ սի-
րելւոյն մարմինը կ'անպատուէ, թէև անիկա
դիակ մըն է. ո՞վ իւր մարմնէն փտած անդամ

մը խաղալով խնդալով կը կտրէ. ո՞չ ապաքէն
մենք ամէնքս այսպիսի պարագայից տակ խո-
րին ցաւ և վիշտ կը զգանք. նմանապէս այս
որոշումը չենթադրեր ամենևին յանցաւորին
վրայ ուրախանալ, կամ ատել զնա կամ իբրև
թշնամւոյ հետ վարուիլ ընդ նմա։

2. Այս որոշումը խիստ չէ, վասն զի յան-
ցաւոր անձը,

(ա) Այնչափ փափուկ աշխատութիւններ,
խրատ, աղաչանք, աղօթք, ջանք և ազդեցու-
թիւններ անարդեց և անպատուեց։

(բ) Մեղք մը գործեց, և փոխանակ անոր
վրայ զղջալու և ապաշխարելու, յամառեալ և
անզղջ մնաց, այն ալ այնքան ջանքերէ,
խրատներէ և յորդորներէ վերջը։

(գ) Քրիստոսի եկեղեցւոյն պատիւը, խաղա-
ղութիւնը, համբաւը և միութիւնը ուրեց և
ոչ միայն չշիտկեց այլ և բոլորովին անտար-
բեր դտնուեցաւ։

(դ) Նա այժմ ոչ միայն եղբօր մը, այլ և
ամբողջ եկեղեցւոյ հակառակ կը գործէ. և
հարկաւ ուրիշ կապ և առնչութիւն մը չունե-
նար ընդ եկեղեցւոյ, այլ հեթանոսի ու մաք-
սաւորի դիրք միայն կ'ունենայ։

(ե) Պարտի հեթանոս և մաքսաւոր նկատուիլ,
որպէս զի ուրիշներ զգուշանան անկէ և չփոր-
ձուին, չքաջալերուին մեղաց մէջ իյնալու, ե-

կեղեցին մաքուր մնայ, անոր բարի համբաւը պահուի և ինքն ալ ամենայ ու խրատուի։

Ուստի, յանցաւո՛ր եղբայր, զգոյշ եղիր արհամարհելէ այն բոլոր ջանքերը, խրատները, համբերութիւնը. քու դարձիդ և ուղղուելուդ համար քեզի ցուցուած փափուկ ու քաղցր վարմունքները և զիջումները. քանզի, "թէ որ աղէկ ընես, ընդունելի չըլլար. և թէ որ աղէկ չընես, մեղքը դրանը քով պառկած է։"

Եւ դուն, ո՛վ եկեղեցի Քրիստոսի, ունենալով ի ձեռին այսպիսի ազնիւ և պատուական կանոն մը, արթուն եղիր ի կիր արկանել զայն անխտիր և անմիջապէս՝ ամէն անգամ որ կը նշմարես "դառնութեան արմատ մը." և հաւատի եմ որ պիտի յաջողիս առաջին քայլերուդ մէջ։ Հոդ տար փորձել անոր զօրութիւնը քու բոլոր դժուարութեանցդ լուծմանը կամ բարձմանը համար. և "ան ատենը քու խաղաղութիւնդ դեռի պէս . . . պիտի ըլլայ։" Մի զրկեր ինքզինքդ այս պատուական կանոնին օրհնութիւններէն. թող քու բարեկեցութիւնդ և խաղաղութիւնդ նախանձելի ըլլայ ազգաց մէջ, քու համբաւդ գովելի և օրինակդ զմայլելի, և բոլոր քու վրադ նայողները աղաղակեն, "Շնո՛րհք, շնո՛րհք անոր։"

ԱԶԳ. ՄԱՏԵՆԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

3507

<< Ազգային գրադարան
NL0030275

3201